ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԷԹԻԿԱՅԻ ՀՌՉԱԿԱԳԻՐ

ՀԱՍՏԱՏՎԱԾ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ
2010 Թ. ՀՈՒԼԻՍԻ 22 և 23
ՌԵՅԿՅԱՎԻԿ, ԻՍԼԱՆԴԻԱ

ԱՐԴԻԱԿԱՆԱՑՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ
ՀԱՍՏԱՏՎԱԾ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ

Միջազգային Վիճակագրական Ինստիտուտ – Մշտական Գրասենյակ
24070
2490 ԱԲ Հաագա
Նիդեռլանդներ
www.isi-web.org

Միջազգային Վիճակագրական Ինստիտուտի Պրոֆեսիոնալ էթիկայի Հռչակագիր

ՆԱԽԱԲԱՆ, ԱՐԺԵՔՆԵՐ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԷՋ

ՆԱԽԱԲԱՆ 3

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԱՐԺԵՔՆԵՐ 5

ԷԹԻԿԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ 7

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՇՈՒՄ 9

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ՄԻԱՅՆ ԱՆԳԼԵՐԵՆ), ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԱՅՑԵԼԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՅՔԷՋԸ՝ https://isi-web.org/declaration-professional-ethics

Թարգմանության հերքում. Անգլերեն տարբերակը ծառայում է

որպես հղման

փաստաթուղթ

ՆԱԽԱԲԱՆ

Միջազգային Վիճակագրական Ինստիտուտի պրոֆեսիոնալ էթիկայի հռչակագիրը կազմված է Ընդհանուր Պրոֆեսիոնալ Արժեքներից և այդ արժեքներից բխող Էթիկայի Սկզբունքներից:

Սույն փաստաթղթի նպատակներից է՝ սահմանել թե "ով է վիճակագիրը", ով շատ ավելի է, քան նրանք, ովքեր ունեն պաշտոնական աստիճաններ բնագավառում, և ներառել վիճակագրական տվյալներ և գործիքներ ստեղծողների և սպառողների լայն զանգված: Վիճակագիրները աշխատում են բազմազան տնտեսական, մշակույթային, իրավական և քաղաքական միջավայրերում, որոնցից յուրաքանչյուրն ազդում է վիճակագրական հարցման շեշտադրման և կենտրոնացման վրա: Նրանք նաև աշխատում են իրենց գիտության մի շարք տարբեր ճյուղերից մեկում, որոնցից յուրաքանչյուրը ներառում է իր ուրույն տեխնիկան և ընթացակարգերը ու, հավանաբար, իր ուրույն էթիկայի մոտեցումը: Ավելին, դրանք նպաստում են ծրագրային ապահովման զարգացմանը՝ հենվելով վիճակագրական մեթոդների վրա, ներառյալ արհեստական բանականությունը և մեքենայական ուսուցման գործիքները: Անկախ նրանից, թե ինչպիսին է նրանց փորձագիտական ոլորտը, վիճակագիրների էթիկայի սկզբունքները նրանց մասնագիտական իրավասության անբաժանելի մասն են և պետք է լինեն համապարփակ վիճակագրական կրթության մաս:

Վիճակագիրներն աշխատում են բազմազան բնագավառներում, ինչպիսիք են տնտեսագիտությունը, հոգեբանությունը, սոցիոլոգիան, բժշկությունը և արհեստական բանականությունը, որոնց պրակտիկանտները կարող են ունենալ կամ չունենալ էթիկայի կոնվենցիաներ, որոնք ազդում են նրանց վարքագծի վրա: Նույնիսկ վիճակագրության միևնույն միջավայրում և ճյուղում անհատները կարող են հանդիպել տարբեր իրավիճակների և սահմանափակումների, որոնցում ի հայտ են գալիս էթիկայի հարցերը:

Սույն հռչակագրի նպատակն է՝ հնարավորություն տալ վիճակագիրների անհատական էթիկայի դատողություններին և որոշումներին, լինել առավել տեղեկացված, քան մասնագիտությունից բխող խիստ կանոններով: Հռչակագիրը ձգտում է փաստաթղթավորել վիճակագրության

մասնագիտության լայնորեն կիրառվող սկզբունքները և սահմանել այն գործոնները, որոնք խոչընդոտում են դրանց իրականացմանը: Այն հռչակում է, որ մեկ սկզբունքի գործողությունը կարող է խոչընդոտել մյուսի գործողությանը, որ վիճակագիրներն այլ մասնագիտական խմբերի հետ միասին ունեն մրցակցային պարտավորություններ, որոնցից ոչ բոլորը կարող են կատարվել միաժամանակ: Հետևաբար, վիճակագիրները երբեմն ստիպված են ընտրություն կատարել սկզբունքների միջև: Հռչակագիրը չի փորձում լուծել այդ ընտրությունները կամ առաջնություններ սահմանել այդ սկզբունքների միջև: Փոխարենը, այն առաջարկում է շրջանակ, որի սահմաններում բարեխիղճ վիճակագիրը պետք է կարողանա աշխատել հարմարավետորեն: Այն կոչ է անում, որ շեղումները սկզբունքների շրջանակից լինեն առավել կշռադատման, քան անտեսման արդյունք:

Հռչակագրի առաջին նպատակն է՝ լինել առավել տեղեկատվական և նկարագրական, քան միահեծան կամ կարգադրողական: Երկրորդը՝ մշակված է, որ լինել որքան հնարավոր է կիրառելի վիճակագրական մեթոդաբանության և կիրառության ընդարձակ և փոփոխվող որորտների համար: Այդ պատճառով դրա հոդվածները ձևակերպված են բավականին ընդարձակ: Երրորդը՝ չնայած սկզբունքները մշակված են այնպես, որ ունենան առավել լայն կիրառում որոշումների, քան հիմնախնդիրների նկատմամբ, առանձնահատուկ նշվում է, որ հռչակագիրը ոչ մի դեպքում ապառիչ չէ: Այն մշակված է այն գիտակցությամբ, որ կպահանջի պարբերաբար արդիականացում և լրացում, արտացոլելով մի կողմից վիճակագիրների կողմից օգտագործվող տեղեկությունների և տեխնիկական գործիքների սերնդի, իսկ մյուս կողմից վիճակագրական արտադրանքի օգտագործման (հետևաբար և սխալ օգտագործման) զարգացումները:
Բազմաթիվ մասնավոր և պետական մարմինների կողմից թվայնացված տվյալների աճող արտադրությունն ու հասանելիությունը, որոնք կարող են օգտագործվել վիճակագրական նպատակներով, այնքան կարևոր երևույթ է, որ նպաստում է անհրաժեշտ

փոփոխությունների համար հռչակագիրը վերագնահատելուն [1] [2]: Չորրորդը՝ արժեքները, սկզբունքները և մեկնաբանությունները, որոնք հետևում են ընդհանուր գրված կամ չգրված կանոնների կամ նորմերի ընդունմանը, ինչպիսիք են համապատասխանությունը օրենքին կամ ազնվության պահանջը: Այնուամենայնիվ, հռչակագիրը որքան հնարավոր է սահմանափակում է ինքն իրեն վիճակագրական հարցման հատուկ մտահոգություն ունեցող հարցերով:

Թեև բացահայտորեն նշված չէ, Սկզբունքներն ի սկզբանե արտացոլում են վիճակագիրների պարտավորությունները և պարտականությունները, ինչպես նաև դրանցից բխող կոնֆլիկտները, որոնց բախվում են վիճակագիրները իրենց իսկ գործունեության շրջանակներից դուրս գտնվող ուժերի և ճնշումների նկատմամբ, մասնավորապես՝

- Հասարակություն
- Գործատուներ, Հաճախորդներ և Ֆինանսավորողներ
- Գործընկերներ
- Սուբյեկտներ:

Իր պարտականություններն իրականացնելիս յուրաքանչյուր վիճակագիր պետք է ուշադիր լինի, որ իր գործողությունները համապատասխանեն յուրաքանչյուր խմբի շահերին և չնպաստեն որևէ խմբի՝ ի հաշիվ որևէ այլ խմբի կամ հակասեն Սկզբունքներից որևէ մեկին:

Սկզբունքներին հաջորդում են դրանց կիրառմանը բնորոշ կոնֆլիկտների և դժվարությունների համառոտ մեկնաբանությունները: Էթիկայի յուրաքանչյուր սկզբունքի համար տրամադրվում է հղում՝ նրանց համար, ովքեր ցանկանում են հետամուտ լինել խնդիրներին:

---

[1] Թվայնացված տվյալները հաճախ մեծ և բարդ տվյալների հավաքածուներ են, և տվյալների ստեղծման գործընթացը կարող է անհայտ լինել: Միևնույն ժամանակ, հաշվողական կարողությունները կտրուկ աճել են՝ հնարավորություն տալով օգտագործել համակարգչային ինտենսիվ տեխնիկաներ, ինչպիսիք են մեքենայական ուսուցումը և արհեստական բանականությունը, որոնք նոր էթիկայի խնդիրներ են առաջացնում վիճակագիրների, տվյալների գիտնականների և ընդհանրապես հասարակության համար:

[2] Գործունեության նոր ոլորտներում վիճակագրության ընդգրկման արագ ընդլայնմամբ, կան իրավիճակներ, երբ ցանկալի է մշակել էթիկայի շրջանակի հատուկ բաղադրիչներ՝ պատասխանելու հարցերին, որոնք ծագում են փորձագիտական այլ ոլորտների հետ համագործակցությամբ, որոնք նպաստում են այս առաջացմանը, տրամադրելու ընդհանուր ուղեցույց: Արհեստական բանականությունը նման օրինակներից մեկն է:

Նմանապես, մեկնաբանություններից հետո տրամադրվում է սահմանափակ ծանոթագրված մատենագրություն նրանց համար, ովքեր ցանկանում են հետամուտ լինել խնդիրներին կամ խորհրդակցել առավել մանրամասն տեքստերի հետ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԱՐԺԵՔՆԵՐ

Մեր ընդհանուր պրոֆեսիոնալ արժեքներն են հարգանքը, պրոֆեսիոնալիզմը, ճշմարտացիությունը և ամբողջությունը:

1. Հարգանք

Մենք հարգում ենք այլոց գաղտնիքը և նրանց տրված գաղտնիության խոստումները:
Մենք հարգում ենք համայնքներին, որտեղ հավաքագրվում են տվյալները և պաշպանում ենք նրանց արդյունքների սխալ օգտագործման վնասից:
Մենք չպետք է ճնշենք կամ ոչ պատշաճ նսեմացնենք այլոց աշխատանքը:

2. Պրոֆեսիոնալիզմ

Պրոֆեսիոնալիզմի արժեքը ենթադրում է Պատասխանատվություն, Իրավասություն, Փորձագիտական գիտելիքներ և Տեղեկացված դատողություններ:

Մենք աշխատում ենք հասկանալ մեր սպառողների կարիքները և մշակել համապատասխան լուծումներ:

Մենք օգտագործում ենք մեր վիճակագրական գիտելիքները, տվյալները և վերլուծությունները Ընդհանուր Բարիքի համար՝ ծառայելու հասարակությանը:

Մենք ձգտում ենք հավաքագրել և վերլուծել հնարավորինս բարձր որակի տվյալներ: Մենք գնահատում ենք դրանց որակը՝ անկախ նրանից՝ հավաքագրվել են հաշվառումների, հետազոտությունների կամ այլ աղբյուրներից՝ օգտագործելով հասանելի որակի շրջանակները:

Մենք պատասխանատու ենք տվյալների և մեթոդների համապատասխանության համար:

Մենք հետևում ենք գործընթացներին, որոնք ուղղված են ապահովելու տվյալների օգտագործման սոցիալական ընդունելիությունը մեր հետապնդած վիճակագրական նպատակների համար (ներառյալ կապակցված տվյալների հավաքածուները):

Մենք քննարկում ենք հիմնախնդիրները օբյեկտիվորեն և ձգտում ենք նպաստել խնդիրների լուծմանը:

Մենք հետևում ենք օրենքին և աշխատում ենք փոխել օրենքները, որոնք կարծում ենք, որ խոչընդոտում են լավ վիճակագրական պրակտիկան:

Մենք շարունակաբար ուսումնասիրում ենք մեր սեփական բնգավառը, ինչպես նաև այն բնագավառները, որոնց հանդեպ մենք կիրառում ենք մեր մեթոդները:

Մենք ըստ անհրաժեշտության մշակում ենք նոր մեթոդներ:

Մենք չենք ստանձնում այն հանձնառությունները, որոնցում ունենք հստակ շահերի բախում:

Մենք գործում ենք պատասխանատվությամբ մեր գործատուների հետ:

3. Ճշմարտացիություն և ազնվություն

Ճշմարտացիության և ազնվության արժեքներն արտացոլված են մեր աշխատանքային գործընթացներում, որոնք հիմնված են Անկախության, Օբյեկտիվության և Թափանցիկության վրա:

Մենք արտադրում ենք վիճակագրական արդյունքներ, օգտագործելով մեր գիտությունը և չենք գտնվում քաղաքական գործիչների կամ ֆինանսավորողների ճնշման ազդեցության տակ:

Մենք թափանցիկ ենք կիրառվող վիճակագրական մեթոդաբանությունների վերաբերյալ և հանրայնացնում ենք այդ մեթոդաբանությունները, ներառյալ բաց աղբյուրի ծրագրային ապահովումը, որտեղ հնարավոր է, որպեսզի հնարավոր լինի վերարտադրելիությունը:

Մենք ձգտում ենք արտադրել արդյունքներ, որոնք արտացոլում են դիտարկվող երևույթները անկանխակալ ձևով:

Մենք ազնվորեն և բաց կերպով ներկայացնում ենք տվյալներ և վերլուծություններ՝ դրանց համապատասխանության սահմանների վերաբերյալ տեղեկությունների հետ միասին՝ տրամադրելով համապատասխան քանակական և որակական տեղեկություններ:

Մենք հաշվետու ենք մեր գործողությունների համար:

Մենք հարգում ենք մտավոր սեփականությունը:

Որպես գիտնականներ, մենք հետևում ենք խոստումնալից նոր գաղափարներին և մերժում ենք դրանք, որոնք անվավեր են:

Մենք աշխատում ենք մեր տվյալների և եզրակացությունների տրամաբանական համաձայնեցվածության և փորձառական համարժեքության ուղղությամբ:

Մենք արժեվորում ենք գնահատման լավ հիմնված օբյեկտիվ չափանիշները:

ԷԹԻԿԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Օբյեկտիվության ձգտում

Վիճակագիրները պետք է հետամուտ լինեն օբյեկտիվությանը՝ առանց վախի կամ բարեհաճության, միայն ընտրելով և օգտագործելով մեթոդներ, որոնք նախատեսված են հնարավոր լավագույն արդյունքների հասնելու համար՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են ճշգրտությունը և յուրաժամանակությունը: Նրանք պետք է ապահովեն, որ վերլուծության մեջ օգտագործվող տվյալները համապատասխանում են նպատակին: Նրանք պետք է ապահովեն, որ ունեն իրենց հասանելի առարկայական պահանջվող գիտելիքները:

Նրանք պետք է ներկայացնեն բոլոր արդյունքները բացահայտորեն, ամբողջական և թափանցիկ ձևով, անկախ արդյունքներից: Նրանք պետք է տեղեկություններ տրամադրեն արդյունքների համապատասխանության սահմանների վերաբերյալ՝

տրամադրելով համապասխան քանակական և որակական տեղեկություններ: Վիճակագիրները պետք է հատկապես զգայուն լինեն արդյունքները ներկայացնելու պահանջին, երբ նրանք վիճարկում են նախընտրելի արդյունքը: Վիճակագիրը պետք է պաշտպանված լինի կանխատեսելի սխալ մեկնաբանությունից կամ օգտագործումից: Եթե առաջանում է նման սխալ մեկնաբանություն կամ օգտագործում, ապա պետք է քայլեր ձեռնարկվեն տեղեկացնելու պոտենցիալ սպառողներին: Արդյունքները պետք է հայտնվեն ի շահ հնարավորինս լայն հանրության, սակայն փորձելով վնաս չհասցնել բնակչության որևէ խմբի:

2. Պարտականությունների և դերերի հստակեցում

Գործատուի, հաճախորդի, կամ ֆինանսավորողի և վիճակագրի համապատասխան պարտականություններն իրենց դերերի և պատասխանատվության հետ կապված, որոնք կարող են առաջացնել էթիկայի հարցեր, պետք է լինեն գրված և ամբողջությամբ հասկանալի: Խորհրդատվություն կամ ուղղություն տրամադրելիս, վիճակագիրները պետք է ջանան մնալու իրենց իրավասության ոլորտում և ըստ անհրաժեշտության փնտրեն խորհուրդներ համապատասխան փորձ ունեցող այլ անձանցից:

3. Այլընտրանքների գնահատում

Առկա մեթոդներն ու ընթացակարգերը պետք է հաշվի առնվեն և այլընտրանքների համապատասխան արժանիքների ու սահմանափակումների անկողմնակալ գնահատական տրամադրվի գործատուին, հաճախորդին կամ ֆինանսավորողին, առաջարկվող մեթոդի հետ մեկտեղ:

4. Շահերի բախում

Վիճակագիրները խուսափում են այնպիսի հանձնարարականներից, որտեղ նրանք ունեն ֆինանսական կամ անձնական շահերի բախում աշխատանքի արդյունքում: Պետք է դիտարկել և ուսումնասիրել տարբեր տեսակի տվյալների հավաքագրման և տարածման հնարավոր հետևանքները և դրանց վերլուծության արդյունքները:

5. Կանխորոշված արդյունքներից

խուսափում

Առաջարկվող վիճակագրական հետազոտությունից կանխորոշված արդյունք հաստատելու ցանկացած փորձ պետք է մերժվի, ինչպես նաև պայմանագրային պայմանները, որոնք պայմանավորված են նման պահանջով:

6. Արտոնյալ տեղեկությունների պահպանում

Արտոնյալ տեղեկությունները պետք է գաղտնի պահվի: Այս արգելքը չպետք է տարածվի վիճակագրական մեթոդների և ընթացակարգերի վրա, որոնք օգտագործվում են հարցումն անցկացնելու կամ հրապարակված տվյալներ արդադրելու համար:

7. Պրոֆեսիոնալ իրավասության դրսևորում

Վիճակագիրները պետք է ձգտեն բարձրացնել իրենց պրոֆեսիոնալ գիտելիքներն ու հմտությունները և պահպանեն իրենց բնագավառին վերաբերող տեխնոլոգիական զարգացումների, ընթացակարգերի և ստանդարտների իրազեկումը, և պետք է խրախուսեն այլոց անել նույնը:

8. Վիճակագրության նկատմամբ վստահության պահպանում

Հանրության վստահությունը խթանելու և պահպանելու համար, վիճակագիրները պետք է երաշխավորեն, որ իրենք հստակորեն և ճշգրտորեն նկարագրել են իրենց արդյունքները, ներառյալ իրենց տվյալների բացատրական հզորությունը: Վիճակագիրների պարտականությունն է՝ զգուշացնել արդյունքների պոտենցիալ սպառողներին դրանց արժանահավատության և կիրառելիության սահմանափակումների վերաբերյալ՝ տրամադրելով համապատասխան որակական և քանակական տեղեկություններ:

9. Մեթոդների և արդյունքների ներկայացում և վերանայում

Համապատասխան տեղեկությունները, ներառյալ բաց աղբյուրի ծրագրային ապահովումը, պետք է տրամադրվի հանրությանը՝

թույլ տալու անկախորեն գնահատել մեթոդները, ընթացակարգերը, տեխնիկան և արդյունքները:

10.Էթիկայի սկզբունքների հաղորդակցում

Համագործակցելով գործընկերների և այլոց հետ նույն կամ այլ որորտներում, անհրաժեշտ և կարևոր է ապահովել, որ վիճակագիրների էթիկայի սկզբունքները հստակորեն ընկալված են բոլոր մասնակիցների կողմից և պատշաճ կերպով արտացոլված են հարցման մեջ:

11.Պատասխանատվության կրում ոլորտի ամբողջության համար

Վիճակագիրները ենթակա են գիտական վարքագծի ընդհանուր բարոյական կանոններին. նրանք չպետք է ստեն կամ գիտակցաբար խեղաթյուրեն կամ փորձեն կանխել սխալ վարքագծի մասին հաղորդումը կամ խոչընդոտեն այլոց գիտական հետազոտությունը:

12.Սուբյեկտների շահերի պաշտպանություն

Վիճակագիրները պարտավոր են հնարավորինս պաշտպանել սուբյեկտներին՝ անհատապես և հավաքականորեն, մասնակցության հնարավոր վնասակար ազդեցություններից: Այս պատասխանատվությունը չի հանվում համաձայնությամբ կամ մասնակցության օրինական պահանջով:

Վիճակագրական հարցման որոշ ձևերի ձանձրացման ներուժը, ներառյալ այլ տվյալների և կապակցված տվյալների հավաքածուների օգտագործումը, պահանջում է, որ դրանք իրականացվեն միայն մեծ խնամքով, անհրաժեշտության լիարժեք հիմնավորմամբ և ներգրավված անձանց լավագույն հնարավոր ծանուցմամբ: Հնարավորության սահմաններում հարցումները պետք է հիմնված լինեն տեղեկացված համաձայնության վրա: Բոլոր դեպքերում սուբյեկտների կամ ռեսպոնդենտների ինքնությունները և գրառումները պետք է պահպանվեն գաղտնի: Պետք է իրականացվեն համապատասխան միջոցառումներ կանխարգելելու վիճակագրության այնպիսի ձևով թողարկումը, որը հնարավորություն կընձեռի բացահայտելու կամ եզրակացնելու

սուբյեկտի կամ ռեսպոնդենտի ինքնությունը:

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՇՈՒՄ

Միջազգային Վիճակագրական Ինստիտուտի ներգրավումը պրոֆեսիոնալ էթիկայի հռչակագրի ստեղծմանը երկարաձգվել է տասնամյակների ընթացքում: Ինստիտուտի Բյուրոն, ի պատասխան անդամների ներկայացումների և Ինստիտուտի ապագա ուղղությունների գծով Կոմիտեի առաջարկին, սկզբում ստեղծեց Վիճակագիրների էթիկայի կանոնագրքի Կոմիտե 1979թ. Մանիլայում Միջազգային վիճակագրական ինստիտուտի 42-րդ նստաշրջանի ժամանակ: Այդ Կոմիտեն[3] մշակել է "կանոնագիրք", որն ընդունվել է Ինստիտուտի կողմից 1985թ. իր հարյուրամյակի տոնակատարության ժամանակ՝ 1985թ. օգոստոսի 21-ին Միջազգային Վիճակագրական Ինստիտուտի Գլխավոր Վեհաժողովի կողմից հետևյալ բանաձևի ընդունմամբ.

- ընդունել, որ Վիճակագիրների համար Պրոֆեսիոնալ էթիկայի Հռչակագրի նպատակն է՝ փաստաթղթավորել ընդհանուր պրոֆեսիոնալ արժեքները և փորձը՝ որպես ուղղորդում տրամադրելու միջոց, այլ ոչ թե կանոնակարգում;
- ընդունել Հռչակագիրը՝ վերահաստատելու անդամների մտահոգություններն այս հարցերի վերաբերյալ և նրանց վճռականությունը՝ խթանելու գիտելիքներն ու պրոֆեսիոնալ էթիկայի նկատմամբ հետաքրքրությունը ողջ աշխարհի վիճակագիրների շրջանում;
- որոշել ուղարկել Հռչակագիրը Միջազգային Վիճակագրական Ինստիտուտի բոլոր անդամներին և նրա բաժիններին և, անհրաժեշտության դեպքում, այն տարածել վիճակագրական մասնագիտության շրջանակում;
- երախտագիտություն հայտնել Հռչակագրի մշակման համար պատասխանատու Կոմիտեին՝ վերջին հինգ տարիների ընթացքում կատարած մանրակրկիտ, արդյունավետ և հաջող աշխատանքի համար:

---

[3] Կոմիտեն ղեկավարում էր Ռոջեր Ջովելը: Սկզբնական անդամներն էին՝ Վ. Էդվարդս Դեմինգը, Առնո Դոնդան, Հելմուտ Վ. Մուհսամը և Էդմունդ Ռապապորտը, որոնց հետագայում միացան՝ Էդմունդո Բերումեն-Տորրեսը, Հիլբերտ Մոտսեմմեն և Ռենե Պադիեուն:

Ժամանակի ընթացքում ինստիտուտի առաջ կանգնեց Հռչակագրի արդիականացման անհրաժեշտության հարցը: 2006թ. հուլիսին Գործադիր Կոմիտեն հատուկ հրավիրեց իր մշտական Պրոֆեսիոնալ Էթիկայի Կոմիտեին[4] վերանայելու Միջազգային Վիճակագրական Ինստիտուտի Հռչակագիրը և "առիթ առաջանալու դեպքում (առաջարկել) արդիականացումներ Միջազգային Վիճակագրական Ինստիտուտի Հռչակագրում": Ներկայում Կոմիտեն դա իրականացրել է: Վերանայված փաստաթղթին, որը պատրաստվել էր 2007թ. մարտին Փարիզում տեղի ունեցած հանդիպման համար և հյուրընկալվել էր Ֆրանսիայի վիճակագրական և տնտեսական ուսումնասիրությունների ազգային ինստիտուտի (INSEE) կողմից, հաջորդել էր բաց հանդիպում 2007թ. օգոստոսին Լիսաբոնում Միջազգային Վիճակագրական Ինստիտուտի միջազգային հանդիպումների ժամանակ, որին այս բոլոր ջանքերի արդյունքները ներկայացվեցին մասնակիցներին՝ իրենց մեկնաբանությունների և արձագանքների համար: Թեև շատ կետերում ակնհայտ էր համաձայնությունը, առաջարկվեցին մի շարք առաջարկներ հետագա փորձաքննության համար, որոնք արտացոլված են Ընդհանուր Պրոֆեսիոնալ Արժեքների մասին բաժնի հավելումով և այս Արժեքներից բխող մի շարք էթիկայի սկզբունքների վերադասավորմամբ և համադրմամբ: Այս փաստաթուղթը այդ վերջին ջանքերի արդյունքն է: Նոր տարբերակը հաստատվել է 2010թ. Միջազգային Վիճակագրական Ինստիտուտի Գլխավոր Վեհաժողովի կողմից:

Թեև 2010թ. Հռչակագրի բովանդակությունը հիմնականում ուժի մեջ է մնում, տվյալների աղբյուրների բազմազանության, կապակցված տվյալների հավաքածուների և հաշվողականորեն ծանր վիճակագրական մեթոդների աճող օգտագործումը պահանջում է

[4] Կոմիտեն, որն իրականացրել է 2010թ. վերանայումը, կազմված էր հետևյալ խմբից՝ Դեյվիդ Մորգանշտեյնը (նախագահ), Մարգո Անդերսոնը, Էդմունդո Բերումենը, Ստեֆան Ե. Ֆիենբերգը, Ֆրեդ Հոն, Ռոջեր Ջովելը, Դենիս Լիվսլին, Օլավ Լյոնեսը, Բիլլ Սելթզերը և Յան Ռոբերտ Սուեսսերը: Կոմիտեն ստանում է կարևոր աջակցություն Էթիկայի Խորհրդատվական Խմբի կողմից, որի կազմում են Ժան-Լուիս Բոդինը, Օլիվեր Ջ.Մ. Չինգանյան, Հովարդ Գաբլիելսը, Դան Լևեվինը, Ռենե Պադիեուն, Հրաչյա Պետրոսյանը և Նորբերդ Վիկտորը:

արդիականացումներ, որոնք ներդրվել են 2023թ.[5]:
Նախկին բանաձևերի ոգուն և տառին համապատասխան՝ Միջազգային վիճակագրական ինստիտուտը ներկայացնում է այս վերանայված և արդիականացված Պրոֆեսիոնալ Էթիկայի Հռչակագիրը՝ շարունակական հույսով և հավատով, որ նոր փաստաթուղթը կօգնի գործընկերներին ամբողջ աշխարհում՝ հասնելու իրենց պրոֆեսիոնալ նպատակներին և պարտականություններին:

[5] 2023թ. արդիականացման մեջ Կոմիտեի կազմը հետևյալն էր՝ Վալտեր Ռադերմահերը (նախագահ), Ժաիրո Արոուն, Միշա Բելկինդասը, Այսե Բիլգինը, Ալբինա Չուվան, Հինգ Վանգ Ֆունգը, Սալեհա Հաբիբուլլահը, Սիբիլ ֆոն Օպելն-Բրոնիկովսկին, Էրիկ Ռանկուրտը, Յան Ռոբերտ Սուսերը, Սիլկե Ստեպել-Վեբերը, Թերեզիտա Էվելինա Տերանը, Դենիս Թրեվին (վերանայման համակարգող), Նիկոս Ցավիդիսը, Գաբրիելլա Վուկովիչը: